ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթի կազմակերպման և մրցույթի արդյունքների գնահատման մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ մրցութային հանձնաժողով)՝

մասնակցությամբ մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Հարութ Ակլունցի, անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Հունան Տեր-Վարդանյանի, Ալեքսանդր Կոչուբաևի,

նկատի ունենալով հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու համար անցկացված մրցույթների գրավոր փուլի ամփոփման անհրաժեշտությունը,

հաշվի առնելով գրավոր փուլի արդյունքներն ըստ ծածկագրերի ստուգել ու հանգամանքը, ինչպես նաև ծածկագրերի և անվան, ազգանվան նշումով աշխատանքների՝ կնքված արկղերում տեղադրված լինելու հանգամանքը,

ղեկավարվելով Պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի (**այսուհետ՝ Կարգ**) 3.6-րդ կետով, 3.11-րդ կետի 4-րդ ենթակետով, 4.7 կետով, միաձայն՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Գնահատել քաղաքացիական ուղղվածության հայցադիմում կազմելու գրավոր առաջադրանք կատարված աշխատանքները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Գնահատել քրեական ուղղվածության դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու գրավոր առաջադրանք կատարված աշխատանքները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Տեղադրել սույն որոշման հավելվածները Պալատի կայքում և փակցնել՝ Պալատում ցուցատախտակի վրա:

09 **դեկտեմբերի** 2019**թ**.
թիվ 1/3-**Ա**

4. 2019 թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը՝ 14:00-ին Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ) բացել կնքված արկղը և հանել ծածկագրերի և անվան, ազգանվան նշումով աշխատանքները:
5. Սույն որոշման 4-րդ կետի մասին իրազեկել հավակնորդներին:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝

Հարութ Ակլունց

Մրցութային հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Պետրոսյան

09 **դեկտեմբերի** 2019**թ**.
թիվ 1/3-**Ա**
ք. **Երևան**